

ընդհանրապես հեռի կ'ապրիմ, եւ այս է միակ պատճառ իմ երջանկութեանս:

Կ. Պօլիս, 1 Յունիս 1880

Ո՞վ կ'ասէ թէ մեր ազգին մէջ միութիւն չկայ:

Այսօր միացան Արարատեան, Դպրոցասիրաց - Արեւելեան եւ Կիլիկեան ընկերութիւնները: Այս միութիւնը չորս ամիս առաջ պիտի կատարուէր, բայց յարմար անուն մը գտնելու դժուարութիւնը չորս ամիս ուշացուց զայն: Արդեօք յարմար դասատու մը գտնելու համար քանի՞ տարի պիտի աշխատի ընկերութիւնը... *Միացեալ Ընկերութիւնք* տիտղոսին տակ այդ ընկերութիւններն երեք անձինք եւ մի բնութիւն կը կազմեն այսօր, պարզապէս ընկերութեան երրորդութիւն մը, որու մէջ Հայր է Արարատեանը, Որդի է Դպրոցասիրացն եւ Հոգի է Կիլիկեանը: Այսուհետեւ որեւէ նուէր պիտի հաւաքուի ոչ թէ յանուն Արարատեանի, այլ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն: Անհաւատները չեն հաւատար այս երրորդութեան, եւ միութիւնն, որ այսօր կատարուած է... անուամբ՝ անկարելի կը կարծեն: Ես տակաւին չեմ կարող վճիռ արձակել եւ կը փափագիմ կարծել, որ ամեն հաւախօսին մէջմէկ դպրոց բանալու փառասիրութիւնը պիտի չունենայ Միացեալ Ընկերութեանց Գործադիր Ժողովն:

Գործադիր Ժողովոյ ատենապետ ընտրուած է պ. Գէորգ Ապտուլլահ, չափազանց հայրենասէր, չափազանց աշխոյժ եւ չափազանց եռանդոտ երիտասարդը: Այս անձն մեծ փառք եւ պատիւ կստանար, եթէ ատենապետ ընտրուէր այնպիսի գործադիր Ժողովոյ մը, որուն պաշտօնն լինէր շէնքեր կառուցանել... օղի մէջ:

(*Վարժարանի մը մէջ*)

–Վարժապետ, Աստուած դրախտը Հայաստանի մէջ չդրա՞ւ:

–Այո՛, Հայաստանի մէջ դրաւ:

–Բայց հիմա Հայաստանի մէջ ադանկ բան չկայ... ի՞նչ է եղեր...

–Շատ հաւանական է որ... որ...

Վարժապետը աշակերտին հարցման գոհացուցիչ պատասխան մը չկարենալով գտնել՝ մազ մնաց որ նրա առջեւ պիտի խայտառակուէր, եթէ նոյն պահուն դիպուածով այդ վարժարանը չերթայի եւ աշակերտին չըսէի.

–Շատ հաւանական է որ քիւրտերը արըրշտկած լինին, տղաս: